

## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՅԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆԳՆԵՐՈՐ ԱՐԵՐՄՏԵԱՆ ԹԵՄԻ

### **WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website:www.westernprelacy.org



## <u> ԳԱՂՈՒԹԻՆ ԵՒ ԱՁԳ. Գ.Ձ.Վ. ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ ԻՐ</u> ՕՐՅՆՈՒԹԻՒԸԸ ԲԱՇԽԵԼՈՎ

## ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՅԱՆԴԻՍԱՊԵՏԵՑ ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍՔՈՅԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈԼՍԱԼՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԼՈՅ 45-ԱՄԵԱԿԻՆ ՏՕՆԱԽՄԲՈԼԹԵԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. կաթողիկոսի Արեւմտեան մեր Թեմին շնորհած հովուապետական այցելութեան նախավերջին հանգրուանը եղաւ Սան Ֆրանսիսքոն, որուն Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին տօնեց իր 45րդ տարեդարձը, իսկ գաղութի զաւակներն ու Ազգ. Գռուզեան-Ձաքարեան-Վասպուրական վարժարանի աշակերտութիւնն ու անձնակազմը ստացած Յալրապետին օրինութիւնները։

Վեհափառ Յայրապետը անձնական օդանաւով մը Լաս Վեկասէն Սան Ֆրանսիսքօ ժամանեց Ուրբաթ, 21 Յոկտեմբերի կէսօրուան մօտ։ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հովիւն ու ժողովականութեան ներկայացուցիչները դիմաւորեցին Վեհափառ Յայրապետն ու շքախումբի անդամները, որուն մաս կը կազմէին Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Ազգ. Կեդրոնական Վարչութեան ու Թեմիս ժողովականութեան ներկայացուցիչները։

Եկեղեցւոյ մուտքին, հայրապետական շքախումբը դիմաւորուեցաւ աղ ու հացով եւ եկեղեցի առաջնորդուեցաւ «Յրաշափառ»ով։ Եկեղեցին ժամադրավայրն էր Գ.Չ.Վ. Վարժարանի աշակերտներուն, դաստիարակներուն, ինչպէս նաեւ բազմահարիւր հաւատացեալներու, որոնք համախմբուած էին ստանալու Վեհափառին օրհնութիւնը։

Դիմաւորումին մասնակից էր նահանգային խորհրդարանի անդամ Լելընտ Լի, որ ներկայացուց երկու հռչակագիր. առաջինը կ՚ողջունէր Վեհափառ Յայրապետին ներկայութիւնը, իսկ երկրորդը կը շնորհաւորէր Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ 45ամեակը։

Աշակերտները երկու մուէր ունէին Յայրապետին։ Առաջին հերթին, անոնք երգերով ու արտասանութիւններով ներկայացուցին գեղարուեստական կոկիկ յայտագիր մը, ապա իրենց մէկ ձեռակերտը նուիրեցին Նորին Ս. Օծութեան։

Ներկայ հաւատացեալներուն ու աշակերտներուն պատգամ մը ուղղելով, Վեհափառ Յայրապետը գնահատեց գաղութի զաւակներուն

եկեղեցասիրութիւնն ու ազգային կեանքին մասնակցութիւնը։ Յատկապէս խօսքը աշակերտներուն ուղղելով, Յալրապետը լայտարարեց, թէ երէզներէն աւելի՝ մանուկներն են իր բարեկամները, որովհետեւ անոնք են մեր ազգի ապագան։ Ան շեշտր դրաւ մանուկներու առողջ դաստիարակութեան կարեւորութեան վրալ, լորդորելով, ու զանոնք պէտք է եկեղեցական ազգային ոգիով, հարստացնել nL մեր ժառանգութիւններով։ Ան նաեւ բարձր գնահատեց այն աշակերտներն ու ծնողները, որոնք հայկական դպրոցի լարկը կր նախընտրեն օտար կրթական հաստատութիւններէ։ Միւս կողմէ, Նորին Ս. Օծութիւնը շեշտեց, որ այս եկեղեցւոյ նստարանները պէտք է միշտ լեցուն ըլլան, որովհետեւ մեր ժողովուրդն է որ կր մարմնաւորէ մեր եկեղեցին։ Ան աղօթքով օրինեց բոլորը եւ լորդորեց կենսաւորել մեր հաւաքական կեանքը։

Յանդիպումը վերջ գտաւ «Կիլիկիա» եւ «Ի վեհ բարձանց» երգերով։ Տեղի ունեցաւ աջահամբոլը, որուն մասնակցեցան աշակերտները։

#### ՅՈԲԵԼԵՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ ծխական համայնքին համար, Ուրբաթ երեկոն եղաւ կրկնակօրէն տօնական ու պատմական։ Արդարեւ, գաղութը Վեհափառ Յայրապետին համար կազմակերպած էր մեծարանքի ճաշկերոյթ մը, որուն ընթացքին տօնախմբուեցաւ եկեղեցւոյ 45րդ տարեդարձը։

Եկեղեցւոյ Յովիւը, հոգաբարձութիւնն ու Յայրապետին հիւրընկալման յանձնախումբը գործակցաբար մշակած էին ուաշաճ յայտագիրը մը։ Ողջոյնի խօսքեր արտասանեցին հոգեւոր հովիւը՝ Արժ. Տ. Խորեն Ա. Քինյ. Յապեշեան, հոգաբարձութեան ատենապոետը՝ Տիար Վարանդ Գասպարեան եւ հիւրընկալման յանձնախումբի ատենապետը՝ Տիար Ռոստոմ Այնթապլեան։ Տօնախմբութիւնը առիթ ընծայեց հոգաբարձութեան, որ պատուէ եկեղեցւոյ նուիրեալ ազգայիններ։

Խօսք առաւ նաեւ Առաջնորդ Սրբազանը, որ հաստատեց, թէ այս տօնախմբութիւնը առիթ է վերանորոգելու շրջանի ազգայիններուն հաւատքն ու հաւատարմութիւնը՝ մեր եկեղեցւոյ ու Կիլիկեան Ս. Աթոռին, իսկ նուիրեալներուն կ՛ընծայէ ծառայական երթը շարունակելու վերանորոգ կենսունակութեամբ։ Ապա, ան հրաւիրեց Վեհափառ Յայրապետը, որպէսզի ներկաներուն ուղղէ իր պատգամը։

Վեհափառ Յայրապետը դրուատիքով անդրադարձաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ ծխական համայնքին ու անոր կեանքը կերտող նուիրեալներուն մասին։ Ան ընդգծեց, որ եկեղեցին սոսկական շենք չէ, այլ զայն կր մարմնաւորեն մեր ժողովուրդն ու ծխական համայնքը։

Անդրադառնալով անցեալ 45 տարիներու իրագործումներուն, Յայրապետը շեշտեց, որ պետք չէ բաւարարուիլ միայն անցեալը յիշելով, այլ պետք է վերանորոգել հոգեւոր ու համայնքային կեանքի ուղին, վերանորոգուիլ ու կերտել նոր հանգրուաններ։ Անցեալ սերունդները հիմնեցին ու կերտեցին այս եկեղեցին, անհրաժեշտ է պահպանել աւանդն ու նոր նուաճումներ իրագործել, իսկ ամենեն կարեւորը՝ պետք է մարմնաւորել եկեղեցին, ըլլալ եկեղեցի, ըսաւ Նորին Ս. Օծութիւնը։

Յալոց Յալրապետը հանդիսականներուն ուշադրութեան լանձնեց hովուապետական այս այցելութեան գլխաւոր երե<u>ք</u> նպատակները, շեշտելով, որ հոգեւոր կեանքի, հայ Դպրոցի ու հայ Դատի կայուածներուն մեջ վերանորոգման ու վերաշխուժացման առաջադրանքները իրարմե անջատ եղելոյթներ չեն, այլ անոնք պայմանաւորուած են իրարմով, որովհետեւ հոգեկան վերանորոգում՝ կը նշանակե նաեւ Յայ Դպրոցի վերակենսաւորում ու մեր արդար իրաւունքներու նկատմամբ հաւատքի ու nahh վերահաստատում։ Աli եզրափակեց գնահատանք wwwpwnh Առաջնորդ Սրբացանին, արձանագրելով hոգեւոր հովիլին, հոգաբարձութեան ու բոլոր ծառալողներուն նուիրումին մասին։

Յայտնենք, որ ճաշկերոյթեն առաջ, Վեհափառ Յայրապետը ընդունած եր Անթիլիասի Մայրավանքին նուիրեալ Տիկնանց Միութեան ներկայացուցիչները, որոնք տարիներու գեղեցիկ աւանդութեան համաձայն, միութեան կողմե յատկացում մը կատարեցին Դպրեվանքին։

#### 3ԱՆԴԻՊՈՒՄ ԾԱՌԱՅՈՂՆԵՐՈՒ 3ԵS

Ծեհափառ Յայրապետը Սան Ֆրանսիսքօ այցելութիւնը աւարտեց Շաբաթ, 22 Յոկտեմբերի կեսօրին ու վերադարձաւ Լոս Անճելըս։ Վերադարձեն առաջ, Յայրապետը մտերմիկ հանդիպում մը ունենցաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ Յովիւին, ժողովականութեան ու Տիկնանց Միութեան ներկայացուցիչներուն հետ։ Նորին Ս. Օծութիւնը բարձր գնահատեց եկեղեցւոյ ճամբով մեր ժողովուրդին ծառայութեան լծուած սպասարկուները եւ յորդորեց աննահանջ շարունակել երթը։

Ինչպես Ֆրեզնօ ճամբորդութեան, նոյնպես ալ վերջին օրերու տեղափոխութեանց համար, յատուկ օդանաւը Վեհափառին ու շքախումբին տրամադրուած էր Ֆրեզնոյի նուիրեալ ազգայիններեն Փառնաքեան եղբայրներուն կողմե։

# HIS HOLINESS CATHOLICOS ARAM I PRESIDES OVER 45<sup>TH</sup> ANNIVERSARY OF ST. GREGORY CHURCH OF SAN FRANCISCO

On Friday, October 21, 2011, His Holiness Catholicos Aram I arrived in San Francisco where he presided over the 45<sup>th</sup> anniversary banquet of St. Gregory Church, conveyed his message and blessings to the community and students of Krouzian-Zekarian-Vasbouragan School, met with the California Lieutenant Governor, and the Mayor of San Francisco.

Upon their arrival, His Holiness, accompanied by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and Councils members, was greeted by St. Gregory Church Pastor and Board of Trustees members.

Later, they headed to the Church for the "Hrashapar" Service and "Achahampouyr".

At the entrance of the Church, His Holiness was greeted by State Senator Leland Yee, who presented the Pontiff with two certificates, one was in

honor of the Pontifical Visit, the other for the Church on the occasion of its 45<sup>th</sup> anniversary.

After the traditional blessing of salt and bread, His Holiness was led into the Church with the singing of the "Hrashapar" hymn, where over 250 faithful had assembled to receive his blessings.

Among the faithful in attendance were students and faculty of KZV School. The students presented His Holiness with two gifts; the first was a performance of songs and recitations, and the second a hand-made gift.

In his message, His Holiness commended the participation of the community in church life. Addressing the students, he stated that he feels a close bond to them as they are the future of our nation. He commended the parents who send their children to Armenian School and stressed the importance of our children receiving proper education and instruction in our religious and national values and cultural heritage. His Holiness also stated that the Church pew must always be full as it is our people that make up the body of our Church, and concluded with a prayer.

Following the singing of the Cilician and Pontifical anthems, faithful had the opportunity to receive the blessings of His Holiness with the "Achahampouyr".

In the evening, a banquet was held in honor of His Holiness and in celebration of the 45<sup>th</sup> anniversary of St. Gregory Church.

Welcoming remarks were delivered by Parish Priest Archpriest Fr. Khoren Habeshian, Board of Trustees Chair Mr. Varant Kasparian, and local Pontifical Visit Committee Chair Mr. Rostom Aintablian. During the evening, the Board of Trustees honored community members for their service.

The Prelate in his remarks stated that this celebration is an opportunity for the parish community to renew their faith and allegiance to the Armenian Apostolic Church and the Holy See of Cilicia, and an inspiration for Church servants to continue their service with renewed vigor. He then invited His Holiness to deliver his message.

His Holiness spoke commendably about the devoted parish community of St. Gregory Church. Referring to the video that was shown on the Church's history, His Holiness stated that, as we watched the video about the Church, you became part of those common memories. You saw how our forefathers and foremothers built this Church. Looking backwards means also to look forward. This celebration is a reminder and a challenge for the community. It is easy to build the Church, but we must become the Church.

Speaking on the Pontifical Visit, His Holiness stated that the focus of Pontifical Visit this time is the renewal of our people. I try to see renewal as a process in the life of our people in three ways; renewal of our Church, renewal of our Schools, renewal of the Armenian Cause, Hye Tad. The three are intertwined, said His Holiness. Speaking about our Church means speaking about our Schools and speaking about the Church and Schools means to discuss the struggles of our people, the trials and violations committed against us. His Holiness concluded his message by once again commending, Parish Priest, Board of Trustees, and all the volunteers for the devoted service.

Prior to the banquet, His Holiness met with representatives of the Seminary Ladies Auxiliary, who presented a donation for the Seminary on behalf of their organization.

On the morning of Saturday, October 22<sup>nd</sup>, His Holiness met with the Pastor, Board of Trustees, Ladies Guild and other volunteers of St. Gregory Church and commended their service to the Church and community.